

# ԲԱՇԱՎԱՎԵՊ

## ՀԱՅ ԳԻՍԱՐԱՆ

ՀԱՅՈՐ ԿԳ. ՊՐԱԿ Ա.

1886

ՑԱՆ. ՓԵԲՐ. ՄԱՐՏ

### ՀԱՆԴԵՍ ՀԱՅԿԱԿԱՆ

Ա. ԿՈՒԴԵՄԻԹ

Ի ՀԱՄԱՊԱՏՈՒՄՆ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ

ԵՒ ԵՂԾ ԿԱՐԾԵԱՑ ՆՈՐԾ.

Ծանրակշիռ հեղինակութիւն ունեցող քննադատս այս երկրորդ անգամ է որ տոհմային ամենէն աւելի նորիրական պատմագրին և պատմագրութեան կարելէր հարուածներ կու տայ . առաջինն յամին 1877 'ի լոյս ընծայեալ ուսումնատեարով մի, որոյ սպեղանին ջանացինք զտնել յամին 1883-84 և 85 բազմավիպաց մէջ տպուած մեր յօդուածներով. հսկ երկրորդն՝ յամին 1883 բրիտանականն Համապատումին մէջ տպուած մէկ յօդուածով, զոր գերմանացի արևելադէան և հայադէտ Բառ հումկարդնէր իրեն սեփական աղնը լութեամբ գաղափարելով յուղարկեց, առ որ կը հայտնենք մեր խորին չնորհակալութիւնը: Նախընթաց հրատարակութեամբն ոչնչացընել ուղեց կուզշրմիթ Հայոց պատմահօր աւանդութեան և անոր գլխաւոր աղքեր՝ Մար իրաս

կատինայի հարազատութիւնն . իսկ այսու յանդուզն քայլ մի ես յառաջ կրխաղայ, և կը ջանաց հաստատել թէ այն ջբնաղ երկասիրութիւնն իսկ, այսինքն է Հայոց պատմագրութիւնն բացարձակապէս Մ. Խորենացոյ գործ չէ:

Գործէ փափաքելի լինէր մեր պատուական վերծանողաց ամբողջ այն յօդուածը տեսանել յեղեալ 'ի հայրաբառ. սակայն մենք աւելորդ համարեցանք, նոր փաստեր չգտնելով անդ, այլ հեղինակին նախընթաց գործոյն և լին Մարդէնի և Ք. Պատկանեանի կարծեաց արձագանգը. բայց համառօտ տեսութիւն մը կ'ընենք որ շափ որ առաջիկայ յօդուածս կը ներէ:

Հեղինակը նախ Հայոց պատմահօր հակիրճ կենսագրութիւնը կ'ընէ և կը փութայ անոր երկասիրութեանց քննադատութեանը: Հայոց պատմագրութիւն

նըն կամ ինչպէս նա կը կոչէ ծննդյա-  
րանական Պատմութիւն Հայոց Մե-  
ծաց, Աշխարհագրութիւնն և Պիտոյից  
զիրքը, են նիւթ քննադատութեան  
հեղինակին. (իսկ մենք զառաջինն և  
զբրկրորդը պիտի քննենք) : Պատմո-  
գրութեան գլխաւոր ազդիւրը են, կ'ըսէ  
նա, Եւսերիոս հանդերձ մեզի ժանօթ  
յոյն հեղինակներով, Հայոց գուսանու-  
թեանքն և Մար իրաս կատինայ, որոյ  
աւանդութիւնքն կը գտնուին ցարդ առ  
Սերէոսի, բայց ոչ թէ զրեց նա յամին  
434, նախ քան զբրիստոս, ասորի և յու-  
նարէն լեզուով 'ի նինուէ, այլ էր նա  
ծննդեամբ Մծուրնեցի<sup>1</sup>, և յասորերէն  
միայն գրեց, յամի Տեառն 383: «Հայոց  
Պատմութեան կարևորութիւնը՝ կրօնից  
և դիցարանութեան նկատմամբ ամե-  
նամեծ է, կ'ըսէ, բայց վատթարագոյն  
երկոյթ մի է ժամանակազրութեան  
խառնաշփոթութիւնը նոյն իսկ ժամա-  
նակակից իրաց մասին ։ Ուստի այս  
թերութեան և աշխարհագրական մեր-  
ձաւորութեանց և նմանութեանց պատ-  
ճառաւ, զոր կը տեսնէ նաև յԱշխարհա-  
գրութեան, սյապիսի եղրակացութիւն  
կ'ընէ, համաձայն հեղինակութեան<sup>2</sup>  
իւր նախընթաց զրուածին Յաղագու  
Հարատարմուրեան Պատմութեան Հա-  
յոց 'ի Մ. Խորենացոյ. « Եթնթաց  
ընդարձակ հետազոտութեանց, բաց 'ի  
այն սիսալ յայտարարութեանց, զորս  
Մովսէս կու տայ իւր հեղինակութիւն-  
ներուն, նայնպիսի սիսալ պատմութիւն  
մի ևս իրեն կ'ընծայէ. ուրեմն Հայոց  
պատմութեան հեղինակն է՝ ոչ եթէ ե.  
դարս այն պատկառելի թարգմանիչն,

1 Քննազոտան կը շփոթէ զիկլոսոփայն Մծուր-  
նեցի ընէ Կատինայ, սասան այնափ որի են  
իրարժե, որչափ Մաքսոնիացի Կուգլթիւն՝ 'ի  
բուեակնուրեցիէն: Խորենացոյն ծանօթ եր  
Մար Արա Մծուրնեցի, և անոր կործիլը Բա-  
գրատունեց մասին. (որ որդ կը գտնու՞ի  
ինչպէս ինքն իսկ խոսութանի՝ Եւրեկո-  
սէ), իրեւ անհաւասի մարդոյ կարծիք կը մեր-  
ժէ, բայց դու ու երբեք կը շփոթէ ընդ Մար Ի-  
րաս կատինայի: Մար Իրասայ աւանդութեան  
համար կ'ըսէ Խորենացի թէ և Վաղարշակա-  
և Արշակաւ սպառին բանք ծերունեցին ։ իսկ  
Մծուրնեցին յԱրշակ և յՊատ կը հասցնէ :

այլ համանուն ուրիշ հայագի մատե-  
նագիր մը, որ եկաց 634 և 642 թուա-  
կաններուն միջոց: Ասոր ապացոյցք են  
նախ՝ որ աշխարհագրական և տեղա-  
գրական անուանակուուրիշնք յետին  
ժամանակաց են, և նմանօրինակ ժա-  
մանակագրական Վրիփակներ կան,  
զորս բոլոր գործին մէջ կը շարէ և յա-  
ճախ ծածկաբար մէջ կը բերէ նոյն իսկ  
'ի Պատմութեան. և երկրորդ՝ Պատմու-  
թիւնն և Աշխարհագրութիւնն երկա-  
սիրողին մի և նոյն անձն ըլլալը այնպի-  
սի կէտ մի է, որոյ վրայ ամենայն տա-  
րակոյս վերցուած է, աշխարհագրա-  
կան շատ մը սեփական մերձաւորու-  
րեանց և խօսելոց նոյնուրեան հեր-  
պէն: Ուրեմն քննադատական որոշու-  
մը՝ ինչ որ Աշխարհագրութեան հեղի-  
նակութեան համար կը վճռէ, նոյնը  
նաև Պատմագրութեան վրայ հասկը-  
նալու է: Յետոյ կը յարէ. « Ո՞վ կըր-  
նայ, յիրաւի, հաւատալ մատենագրի  
մը՝ որ իւր Պատմութեան Գ զիըն ա-  
ւարտելով 'ի Ս. Մեսրովը, անոր մահը  
Յաղկերտ Բէ երկրորդ տարին կը զնէ  
(17 Փետր. 440). մինչդեռ լսու նեօլ-  
տէրի<sup>3</sup> այն թագաւորին թագաւորու-  
թեան սկիզբը 438 օգոստոս 4 թուա-  
կանին կ'իյնայ, և կը հաստատուի 'ի  
յիշատակարանաց վկայաբանութեան<sup>4</sup>  
Փեթիոնի: — որ մետասան տարի թա-  
գաւորել կու տայ Ա. Յաղկերտի, (399-  
420) որ իւր նախորդին՝ վուամայ Գէ  
կը վերաբերին, և (420-439) Յաղ-  
կերտ Աէ 24 տարին՝ յաղորդին՝ վուամայ  
Եէ: — որ սասանեան տէրութեան բա-  
ժանումը կու տայ չորս սպահապետու-

Հերոնիմոս ևս յիշելով զՄարգրաս՝ կատինա-  
ցի կ'անուանէ զայն (և ոչ թէ Մծուրնեցի), որ  
ըստ Կործեաց Պատմանեանի կասինյ քազա-  
քէն կ'ածանցի: Այս մասին մանրամասն տեղե-  
կութիւնը տես 'ի Բազլ. 1883, Պատ Գ, էլ  
230-236:

2 In the Berichte der phil. histor. Classe  
der Königli. Sächs. Gesellschaft der Wissen-  
schaften 1876, p. 1. Sq.

3 Geschichte der Sassaniden aus Tabari. p.  
423.

4 Hoffmann, Auszüge aus Syrischen Aheten  
persischer Martyrer. p. 67.

թեանց՝ զուտ հին պարսկական անուանակողութեամբ, մինչդեռ այն բաժանումը խոսրով ԱՅ թագաւորութեան առաջին օրերն սկսաւ (531-579)։ — որ իւր Ա. զրոց ժԴ գիլուն մէջ հայկական գաւառաց բաժանումը յԱ, յԲ, յԴ և 'ի Դ Հայս՝ կը հանէ 'ի վեր ցԱրամ, որ էր ժամանակակից նինոսի, մինչդեռ Քրիստոսի 536 թուականին մտաւ. — որ Գ զրոց ԺԸ գիլուն մէջ կը ձգէ Շապից Բ արշաւանքը մինչև 'ի Բիւթանիա, մինչդեռ Պարսիկք ինչուան 608 թուին Քր. հոն Հասան. — որ կը չփոթէ ԱԱ. կապագովլիկա Ա. Հայոց հեա, որով Մաժաք և լեառն Արգէսս աեղափոխուած են յեաին տեղոյն մէջ (Մ. Խորենացի Ա. զլ. ԺԴ. և Աշխարհ. Սէն Մարդէն, հա. Բ. էջ 354): Այսպէս նաև յԱշխարհագրութեան են ձենաց և ձեմքակուրի և Պարայի հիմնարկութեան հատուածները, մինչդեռ այն քաղաքը հ35 թուականին հիմնեցաւ. Աւստի մենք ալ կը հետեինք նոյն դատմանը (Պատկանեանի, Սէն Մարդենի և Վերյայիշեալ գրուածոյ հեղինակութեան, զոր նա ինքն գրեց յամին 1876). Եթէ սահմաննեն յորում Աշխարհագրութիւնը շարագրեցաւ են որոշեալք 'ի մօսոյ, կարող ենք ըսել, թէ արքաբական հրամանատարութեան արշաւանքին, որք սկսան մոնել 'ի Հայս (651), այս գիրքս պէտք է որ գրուած ըլլայ ստուգիւ, և կամ յետ այսր թուականի և գուցէ 657ին»։

Ահաւասիկ գերմանացի քննադատին եղրակացութիւնը բոլոր իւր վաստերով, որոց մի մասին, այսինքն է Աշխարհագրութեան հարազատութեանը դէմ եղած առարկութեանց պատասխանն արդէն իսկ ամբոյ յառաջ տուած է ինճիմեան՝ ընդդէմ Սէն Մարդենի: Բայց որովհետև կուդշմիթ այս քաջութիւնն սև ունեցաւ, այսինքն է՝ առաջոյն խարխուլ հիմնանը վրայ հաստատուած ուրիշ գիւտ մի ևս հնարեց, որով մեր ոսկեղինիկ գարու գեղեցիկ

1 Հնակնոսութիւն Հայաստանի Գ. էջ 309.

յօրինուածութիւնքը կը փոխադրէ 'ի դարն ի և երկաթեայ, և կը հանէ հանդնէ զլՄ. Սիրենեցի իբրև յօրինող և ճարտարապետ նորին, այն պատճառաւ ես իսկ հարկ կը համարիմ նոր դրութեամբ և քննութեամբ՝ անոր հիմն 'ի վեր աապալել, կամ լաւ ևս՝ քննադատին բերած զէնքերով զքննագատը վիրաւորել, և անոր երկայութեան մէջ ձեացած առերեոյթ և շրջուն պատկերն ուղիղ և իրական պատկերի փոփոխել:

Բայց գեռ մեր քննական ձեռնարկութիւնը չսկսած հարկ կը համարինք ծանուցանել թէ գերմանացի հեղինակին նոր շինած շէնքին իբրև նեցուկ են հետագայ չորս կէտերա. Ա. եկամուտ անհարազատութիւնք և մերձաւորութիւնը յերկոսին գիրս Մովսիսի. Բ. ժամանակագրական շինութութիւնք. Գ. Մովսէս թարգմանիչ է գարու, որ կը ընարար գիւրաւ շփոթիլ ընդ Մով. Խորենացւոյ որ եկաց 'ի և գարու. Դ. անվատահութիւն դէպ առ տոհմային մատենագիրս և յիշատակարանս, և ընդ հակառակն շափազանց վստահութիւն արտաքին յիշատակարանաց և հեղինակութեանց վրայ. զորս ինքն ածէ 'ի վկայութիւն: Աղդ եթէ խախտելու ըլլանք այս յենարաններս՝ այն ժամանակ կուղմիթի այդ բարձր աշտարակն ևս հարկ է որ ինայ կործանի:

Գոցենք առ ժամն հայ չերոդուսոսի Պատմագրութիւնը, գոցենք նոյնպէս Աշխարհագրութիւնն, որ եղած է քար գայթակղութեան քննադատին և անոր համախոհից, այնպէս որ Խորենացւոյ անուան իսկ յայնս չտեսնուի: Սահայն երկու բան միայն կ'առաջարկենք Խորենացւոյ գատաւորին. որ են Ա. կ'ընդունի գէթ Մ. Խորենացւոյ և իւր ժամանակակից իշխանաց Սահակայ Բագրատունւոյ և Սահ. Արծրունւոյ գոյութիւնն 'ի և գարու. Բ. փերջնոյս առ Մ. Խորենացի գրած թուզմբը և Խորենացւոյ առ նագրած պատասխանն: — Անշուշտ իբրև հնագէտ և ճշմարտասէր՝ պէտք է որ այս զիջողութիւնս ընէ, ե-

թէ չուզեր 'ի Սկիլլայց փախչելով՝ երթալ զարնութիւ Քարիբդայց։ Արդ փեցաթիւ պատկառեի հնութիւն ունեցող ձեռագիրք՝ միայն 'ի մատնագարանի վանացս, այլևայլ տեղեաց և ժամանակաց մէջ դրուած և 'ի զանազան գրաց, կը ներկայացընեն մեզ այժմ վերցիշեալ թղթոց անդին յիշատակարաններն։ Ա. նախ նկչէ թուոց օրինակին բաղդատութիւնը, զոր, յիշէ Հ. Ներսէս Սարգսեան՝ յամին 1865-ի վկենետիկ տըպուած Մով։ Խորենացւոց երկասիրութեանց յառաջաբանին մէջ։ Բ. հնագոյն և փոքր երկաթագիր ձաւընտիրն Զ. որ դրուած է 'ի Մաշկնոր<sup>1</sup> վանս, Դաւիթի Հօր ժամանակ։ Գ. Ճառընտիրն իթ. որուն բնագիրը կը գտնուէր Մշոյ Առաքելոց վանքը, զրեալ Ուրփ (1204) թուականին, մեծ երկաթագիր։ Դ. ձեռագիրն Սմբատայ՝ թերի, հանեալ 'ի հնագոյն մատենից Աւեանայ։ Ե. Ճեռագիր օրինակ մի անթուական։ Հուսկ՝ Զ Ճառընտիրն իթ, որ ԺԱ. գարուն գրուած է։ Բաց 'ի Վերջնոյն՝ միւսներուն մէջ գտնուած այն թղթոց պատճէնքն ունին զանուանս Ա. Արծրունւոյ և Մ. Խորենացւոց։ Ասկայն ամենէն աւելի նշանակութիւն ունին իթ և իլ Ճաւալնուիրներուն միջի թուղթերը, ոչ միայն հնութեամբն՝ այլ նաև մեր խնդրոյն վերտրերութեամբ, զի յաւրատ առաջնոյն գրուած է։ «Զայս ցանկալի պատմութիւն բազում՝ ըղձիք և ցանկալի յուղմամբ գտեալ մեծ հոետորն Մովսէս Խորենացի գրեաց մեղ ստուգիւ գիւղեւ հաւասարագութեամբ, զի յաւրատ առաջնոյն գրուած է։ Այսու ցանկալի պատմութիւն բազում՝ ըղձիք և ցանկալի յուղմամբ գտեալ մեծ հոետորն Երանեալ Աստումայ որդւոց Սենեկերիմայ և գտանէ 'ի մեծ սուրբ Ռւշան

Սահահին կոչեցեալ, և 'ի ձեռն մեծագոյն պարզեաց և դրոց (թղթովք) ձեռին հայցէ 'ի նոցունց, և բերեալ զրով ստուգապէս հաւաստի պատմութիւնս, և տայ զնել առ պատկեր Ա. Կուսին ։ Այսն այս տեղեկութիւնս կը գտնուի մանրամասն պարագայիր, քնակ իր ճառընտիրին մէջ, բայց թղթոյն պատճէնն փոխանակ Մովսիսի՝ Յովէ։ Մանդակունւոյ ընծայուած է։ (Կուզմիիթ կարէ աստէն չունչ մ'առնուլ, վասն զի շուտով նեղը պիտի մանէ)։ Բայց այս իրողութիւնը ոչ միայն չի մերժեր զլմ։ Խորենացի լինել հեղինակ այն թղթոյն, այլ լւաւագոյն ևս կը հաստատէ. որովհետև ոչ միայն 'ի բաց թղթուած է աստ թղթոյն, առաջին մասն և վերջաբանը, որ ուղակի Ա. Արծրունւոյ կը վերաբերէր, այլ և յանուանէ կը յիշուի Յ. ի սկիզբն պատմութեան Պատկերի կուսին՝ Մովսէս Խորենացի իրրե գտիչ այն պատմութեան։

Այս թղթոց հարազատութիւնը կը հաստատեն միաբերան ամենայն տոհմային մատնագիրը մեր և բոլոր աղջին աւանդութիւնն։ Առնունք այժմ այդ կրկին թուղթերն և բաղդատենք Մ. Խորենացւոց Պատմագրութեան Ա. գրոց։ Ա. զիսուն հետ, զոր կը կունք թուղթ Մ. Խորենացւոց առ Ա. Բագրատունի. և այս թուղթս կը գտնուի պատմագրութեան ամենայն ձեռագիր օրինակաց մէջ, թէպէտ և թերի. եթէ գտնուին անոնց մէջ այնպիսի պատմական ներքին և արտաքին հանգամանքներ և նոյնութիւնք՝ որք զիրարաննեն, մի և նոյն հեղինակի գործ ըլլալն յայտնապէս ապացուցուած կը լինի։ Առնունք ամենուն ծանօթ տպագիր օրինակն։

<sup>1</sup> Վասն զի գաղափարովն կ'ըսէ որոշակի 'ի մերջ կոյս թղթոյն։ «Բրինասոս Աստուած . . . շնորհեա յարութիւն Մաշկնորիս և ամենայն ելքարոց և գրուց»։

<sup>2</sup> Ցայտանի նշան մի է թէ Յովէ։ Մանդակունի ևս 'ի մեծ յարգանս ունելով զայն, անոր պարզ պատմական մասը միայն արտասահած է կամ

ընթերցեալ յականչս ամեստի ժողովրդեան իւր մէկ ձառով։

3. Թէ որպէս եղել փոխումն, կամ յայր ձեռն կամ թէ ով եղել պատմա ինդրոյն, կամ ով երեր 'ի հայք, զայս մեզ ստուգաբաննեաց մեծ ի մաստակըն՝ այսն Աստուած Մովսէս Խորենացի և կարգեաց մի ըստ միոջէ»։

## ԹՈՒՂԹ ՍԱՀԱԿԱՅ

ԱՐՄԵՐՈՒՆԵԱՑ ԽՇԱՑՆԻ

Ա.Դ. ԵՐԱՆԵԼԻ ՎԱՐԴԱՊԵՏՆ

ՄՈՎԱԿԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ

Հրեշտակ և սպասաւոր մեծութեանցն քրիստոսի . . . . : կամիմք ցնծալ առ ժամանակ մի ՚ի լցո քո, որ տուարդ մեզ երկրորդ Սահակ և Մեսրովը յետ գնալոյ նոցա առ Աստուած, վասն օրոյ երկրագութիւն հասցէ ՚ի սուրբդ. զգրեալ գիրս Բագրատունեաց իշխանին, զգրեալու ՚ի քէն ընթերցաք, և ուսաք զուսմունո հայկական աղանցս Հայոց, զմերս Նախնեաց գալ յայս երկիրս . . . Ա.Ալ կամիմք ուսանել ՚ի քէն զըսքանչելագործութիւն պատկերին, որ յանոն Ծիրամօրն կոյ ՚ի Հոգեաց վանս . . . Ա.Ալ իմ ընկալեալ ՚ի ձեռաց սուրբ մատանցդ զիր, առաւել յուսով ընկալեաց, քան զգիրս Բագրատունեաց (այսինքն է առ Բագրատունիս ուղղուածը) ՚ի ձեռս իմ: Ողջ լեր ՚ի Տէր » . . . . :

Ա.յս թուղթս երեք կարեոր և ամենահաստատ իրողութիւններ կը յայտնէ. Ա. Խորենացւոյ գոյութիւնն և իւրժամանակամիջոցն առ Սահակաւ և Մեսրովաւ. Բ. անոր գրած թուղթը կամ Պատմագործեան զիրքը առ Ա. Բագրատունի. յորմէ ուսան զպատ-

մութիւն հայկական աղանց և իրենց նախնեաց (Արծրունեաց և Բագրատունեաց) ՚ի Հայաստան գաղթիլը. Գ. Խորենացւոյ առ Սահակ Արծրունի զրած պատմախանին: — Բանանք զպատամանի թղթոյն Սահակայ Արծրունւոյ գրեալ ՚ի Մովկիսէ.

ԹՈՒՂԹ ՄՈՎԱԿԻՍԻ Ա.Դ. ԱՐՄԵՐՈՒՆԻ

« Զյորդորիւն առատորեան աստորհային հոգույն շնորհաց, որ ՚ի վերայ քր անդոզ մնացդ, որ վասն զրոց ճանօրուրեան և սիրոյ առ Աստորհած, յառաջ քան զտեսորիւն՝ ՚ի ձեռն համբաւոյ լուեալ իմ զիտինականորիւն մնձի հզօրիդ ճանեայ. և այժմ ՚ի ձեռն արժանափայլ խնդրոյ, յառաջ քան զնկարագիր պատկերիդ և զտիս մարմնոյդ, տեսեալ ՚ի վրէժինդորորիւն հոգույն, զիտացի ո՞ր վերին չնորհաց է » . . . . :

Ա.յս բացատրութիւններս լսատ իմաստեց բոլորովին՝ և զրեթէ բառ առ բառ նոյն ևն և նման հետեւեալ բացարու-

թուղթ ՄՈՎԱԿԻՍԻ Ա.Դ. Բ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

« Զանապատ իաղացմունիս աստորհայնոցն ՚ի քեզ շնորհացն և զանեով հոգույն ՚ի վերայ քր իմացուածոց շարժմուն ճանեայ ՚ի ձեռն զեղեցիկ խնդրոյս, յառաջ քան զմարմնոյդ զնոգույդ ընկալեալ զճանօրուրիւն, որ և սիրելի իմոցս իսկ է ախորժակացս, առաւել ևս սովորութեանց » . . . . :

թեանց՝ զոր կը քաղենք անոր առ Սահակ Բագրատունի գրած թղթէն, գնելով զիմացէ զիմաց:

Փոխադարբար առ Աահակ Բագրա-  
տունի գրած թղթոյն շացաւնակութեան  
մէջ կան բացատրութիւններ, որք նը-

ման են առ Աահակ Արծրունի գրած  
թղթոյն բացատրութեանց հետ որի-  
նակ իմն .

## Ի ԹՂԹՈՅՆ ԱՌ Ս. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

« Զի երե վասն բանին մեք...  
պատկեր եւեք Աստուճոյ ... ապա ու-  
րեմն զիտկականորեանդ քո վար և  
բորբոք պանկով զիայնակն՝ զարդա-  
րես գրանեն. որով մնաս առ ՚ի լի-  
նելն պատկեր (անմահանաս) ...: Յա-  
դագս որոյ նեշտարար ընկալեալ զքո  
խնդիրդ աշխատասիրեցայց ածել ՚ի  
կատարումն, անմաս ՚ի յիշտառակ բո-  
դուշ զայս քեզ »....

« Վասն որոյ և ինքն բանն Աստուճաճ  
՚ի ստեղծանելն զմարդն բանիր զար-  
դարեաց ... վասն որոյ զրանին վաս  
և բորբոք պանկով զիայնակն՝ ան-  
մահանամք ..... Այլ զինդիր աս-  
տուճաճէք իշխանիդ, որ վասն պա-  
տուական պատկերի Տիրամօրն, անմահ  
քոյին ազգի բողում յիշտառակ, զի և  
զուարձանամ ՚ի յիշտառակի Տիրա-  
մօրն »:

Աւստի ըստ իմ կարծեացս Մ. Խորե-  
նացւոյ կրկին թղթոց այսպիսի նմանա-  
ձայն բացատրութեանց պատճառըն ևս  
կրկին են. այսինքն է, նախ այն երկու  
անմահանուն իշխանաց, որք Մեկե-  
նապէ եղան Հայոց քերթողահօրն, աղ-  
գակից և հաւատարապատիւ ըլլալն. և  
երկրորդ՝ անոնց նախանձաւորութիւնն  
զմիմեամբք ելենելս առնելով՝ զրաւել  
զհամակրութիւն Խորենացւոյ, և սո-  
րա փոխադարձ զգուշաւորութիւնն առ  
՚ի չիրաւորելու անոնց անձնափրու-  
թիւնն, Եւ յիրաւի այս բանս խիստ յայս-  
նի կ'երեի Աահակ Արծրունւոյ այս բա-  
ցատրութենէն. «Երկրպագագութիւնն հաս-  
ցէ ՚ի սուրբդ », և թէ՝ « զգրեալ դիրս  
բագրատունեաց իշխանին զգրեալս  
(ակնարկութիւն է) ՚ի քէն ընթեր-  
ցաք ». և Խորենացւոյ զանոնք զուգակ-

ցարար դրուատելու կերպէն <sup>1</sup> : Աւրեմն  
եթէ Մ. Խորենացւոյ առ Ս. Արծրունի  
գրած թուղթը, անոր Պատմագրու-  
թեան Ա. գլխուն, ըստ ամենայնի մի և  
նոյն <sup>2</sup> բնադրուշն ունի, այն ժամանակ  
ուղիղ քննադատութիւնն առանց կա-  
կածի կը թելազրէ եղրակացընել (ինչ  
պէս եզրակացոյց կուղչմիթ) թէ մի և  
նոյն հեղինակուրեան գործ է. իսկ ո-  
րովն ետև անձխուի կերպով ապա-  
ցորշինք թէ հեղինակ առ Ս. Արծրունի  
գրամ բդրոյն է Մ. Խորենացի, որեւնն  
Մ. Խորենացի է հեղինակ և զրիչ նաև  
բոյոր Հայոց Պատմագրուրեան, որք  
այնպէս անբաժանելի կերպով միա-  
ցած են ընդ իրեարութեանքն զուիսն  
՚ի մարմնիք. Աւրեւնն շատ աւելի դժուա-  
րութիւնիք բնդիկէմ կը զինին Մ. Խորե-  
նացւոյ Պատմագրուրիւնը է դարուց

1 • Որպէս երկու աչք զբուր մարմն զար-  
դարէ, այսպէս երկու կողմանբդ արևելց և  
հեռսկոյ ՚ի ձէնք լուսաւորին. և որպէս երկու  
ձեռք միացեալ ՚ի դօրծ պիտոյանան, այսպէս և  
երկիր Հայոց ՚ի ձէնք դշյանան :

2 Այսպիսի նշյուռնեան բացայաց օրինակ  
են նաև զի Մ. Խորենացի թէ Հորիփենանց  
Ներպողն մէջ. թէ Արծրունւոյ թղթին և թէ  
Պատմագրութեան Ա. կ'ի գլխոց մէջ զի՞քը  
« Մեր հասկա (120 ամաց ըստ Թովմանի Ար-

երունւոյ) և հիւանդու կը խոստովանի. Բ. առ  
Ս. Արծրունի գրած Տիրամօր Պատկերի Պատ-  
մութեան մասին կ'ըսէ « Արդ մի ոք անուասումն  
զմեզ համարելով վասն կրկնաբանելց զասա-  
ցեալս առ ՚ի մէնջ » . նոյն բազատրութիւնը կ'ը-  
նէ բառ առ բառ Ա. գրոց Բ. գլխուն մէջ նաև  
Պատմութեան Եղբայրասիրի համար, յասելն .  
և բայց մէկ ոք աստանօ անուասուն զմեզ համա-  
րեալ բարձրացիք, որպէս քէ... » :

զորք համարելուն դէմ՝ քան թէ Ե դաւ-  
րու և նեղինակուրիւն։ Այժմ գործս չի  
ներեր այն դժուարութիւնը մէջ թե-  
րել, բայց ՚ի պահանջել հարկին պա-  
տրաստ եմ։ Այսուհետեւ բազգատենք  
զհարազատ Պատմագրութիւն խորենա-  
ցւոյ ընդ Աշխարհագրութեան, որուն  
հեղինակ չեն ճանաչեր հակառակորդք.  
արդ եթէ գտնուին այն երկու տարբեր  
դրուածոց մէջ Նմանատիպ մերձաւորու-  
թիւնք և նոյնութիւն ոնց գրութեան,  
և պատմական, աշխարհագրական և  
տեղագրական արտայայտութեանց, այն  
ժամանակ հետեւութիւնն յայտնի է։

Ա. Արդ, այն երկու երկասիրութեանց  
ևս ուն կամ լեզուն խփապէս Ե դարու-  
հայկաբանութեան և հնութեան ընա-  
դրոշմն ունի, և ուրկի ուրկի, յունակա-  
նին ազգեցութիւնն, (որուն Կ'ըսուի  
թէ Մովսէս ՚ի պկրանն պաշտպան  
եղաւ և ՚ի վար Էարկ), զոր չէ մարթ  
ընծայել ի դարու հեղինակի մը, որ  
բոլորովին պարսկային և արաբական  
ազգեցութեան տակ ենթարկուած էր։  
Բայց որպէս կան գերմանացի քննադա-  
տըն ոչ Հայոց լեզուն և ոչ իսկ Հայկա-  
բանութիւն կը ճանշնայ, ուստի աւե-  
լորդ Էր անոնց լեզուական զուգակշխոն  
ընել, իսկ որովհետեւ քո՞ջ դիտէ որո-  
շել ոսկին յերկաթոյ և հինդերորդ դա-  
րու տիպը յեօթներորդէն, ուստի Կ'ը-  
սենք թէ այն երկու գրուածոց լեզուն  
և տիպն այնշափ կը տարբերին յէ դա-  
րու գրուածքէն ինչպէս ոսկին յերկա-  
թոյ, ուրեմն Մ. Խորենացւոյ ոսկիաբան  
գրչէն և ոսկեծոյլ հայաբուղլս մտաց  
կազապարէն միայն կրնային արտա-  
դրուիլ այն մեծամեծ գործերն, և թէ  
անոնք ամենայն քանէ աւելի, ըստ իս,

1. Ա. Ուսուգելեան որ Սիւնեաց ամենայն դոր-  
հերը չանաց քո՞ջ հանգիսացընել, Մ. Սիւնեցւոյ  
համար ամենանին ակնարկութիւն կամ խօսք մի  
քըներ ոյս մասին։

2. Մ. Խորենացւոյ թարգմանած գրերն և  
՚ի յունէ և յասորերնէ, որք են պատմակամ և  
աշխարհապահան, օրինակ իմ Քրոնիկոնն Եւ-  
սէրփոս և Աշեղեցական պատմաւթիւնն նորա-  
Պատմութիւն Աշեղսանդրի գրեալ յԱրիստո-  
ւելէ, և Պաղոմէստի և Պատպայ Աշխարհագրու-

եղան բուն պատճառք մեծանուն հոչա-  
կելց զիսորենացին յաղդիս։ Իսկ գա-  
լով հնութեան բնադրոցմին, Կ'ըսենք՝  
թէ ինչ տարբերութիւն որ ինքը կ'իմա-  
նայ Ուլիփիլասոյ և նիէպէլունկէն եր-  
գոց մէջ և անոնցմէ երկու դար վերջը  
եկող ցամաք և անոն հեղինակաց ար-  
տադրութեանց մէջ, նոյնը կը զգան  
հայ լսելիք և միտք խորենացւոյ, Եղ-  
նըկայ, և Մ. Սիւնեցւոյ և Անանիս Շի-  
րակացւոյ գրուածոց մէջ։

Բ. Ոչ ոք ՚ի գիտնական մատենա-  
դրաց ընծայեց պատմական կամ աշ-  
խարհագրական երկասիրութիւն մի Մ.  
Սիւնեցւոյ և կամ պատմիչ անուանեց  
դայն, ուստի և ոչ իսկ նա այնպիսի մե-  
ծամեծ գործեր արտադրելու դիտու-  
թիւնն և միջոցներ ունէր Ուրեմն Մ.  
Խորենացի միայն ունէր այն մեծ և աշ-  
խարհապատճեամ գիտութիւնն, որ ան-  
ձամբ ճանապարհորդելով յարկելու և  
յարկեմուտս, յԱթէնս, ՚ի Հռոմէ, յԵ-  
գիպտոս, յԱկորիս, հմտացու հին  
ազգաց պատմութեան<sup>2</sup> և լեզուաց և  
աշխարհագրութեան նոյնն եղեսիոյ և  
Աղեքսանդրիոյ հոչականուն մատենա-  
դիրքն և մատենագրաբանքն աչքէ ան-  
ցուցած է։ որուն կը վկայէ նոյն իսկ  
գերմանացի քննադատն, իւր կրկին  
գործոց մէջ ևս՝ գրուատելով դայն։  
Այս բանիս մի մի խօսուն վկաներ կը  
հանդիսանան Մ. Սսողիկ<sup>3</sup>, Թովմաս  
Արծրունի, Սամուէլ Անենցի, կիրակոս,  
Վարդան, Միկայէլ ասորի Յովիք Ման-  
դակունի, Ռիխտանէ և Ներսէս Շնոր-  
հալի, ոչ միայն կոչելով զիտորենացի  
քերթողահայր, այլ և սառուարան և  
քաջ պատմագիր և աշխարհագիր.  
ումանք յանուանէ կը յիշեն անոր եր-

թիւնք, կը ցուցընէն զնու մեծ պատմաբան և աշ-  
խարհագիր ոք։

3. Ա. Ասողիկ իւր Պատմութեան կամ Ժա-  
մանակագրութեան յառաջտրանին մէջ (Ճեռա-  
գիր, գրեալ Ռէնի Բուսին, յուսին, ՚ի Մ. Ղա-  
զար), յետ Շռեւելց զպատմագիրը կը յիշէ ան-  
միջապէս զՄ. Խորենացի յւս Ագաթանգեկասի,  
ապա զՂազար, և այն։ Արդ Եթէ եղած ըլուր  
երօք յց դարու պատմագիր ոք Մովսէս, զանց  
չէր ըներ յիշելու անոնց կարգին մէջ։

կու երկասիրութիւններն ևս, իսկ այլք օգտուելով և յաճախ անոնցմէ օրինակ՝ ներ մէջ բերելով։ Վկայ են այն կրկին դրուածոց ձեռագիր օրինակներն, այլ և այլ թուականներով, որոց ամենուն վրայ միշտ խորհնացի և ոչ երբեք Սիւնեցի անունը գրուած կը տեսնէք. ուստի այն բանն՝ որ իրական դոյութիւն չունի՝ ուզել հասատաել, ոչ այլ ինչ է՝ բայց եթէ եղջերուաքաղ մը ծնանել. սակայն գերմանացին եթէ բիւր եղջերուաքաղներ ևս ծնանի, ոչ երբեք կը ընան Մ. Խորենացւոյ իրական Պատմագրութեանը մնասել կամ փոխանակել։ Գ. Աշխարհագրութեան հեղինակն, էջ 589, կը յիշէ զՊատմէու՝ յասեն. « Բայց Պատմոմէու, որոյ արք բազմաշըրջութեամբ զամենայն չափեցին ». Նոյնը կը յիշէ ճիշդ մի և նոյն բառերով նաև ՚ի Պատմագրութեան »։

Այս արիքադնեան թելս ունելով՝ ՚ի ձեռին՝ անցնինք ուզզակի այն երկասիրութեանց մէջ գտնուած համանման կէտերու կամ իրաց քննութեան, զորս կուդշմիթ՝ աշխարհագրական, պատմական և տեղագրական մերձաւորութիւններ կամ նոյնութիւնս անուանած է իւր քննադատութեանը մէջ։

Ա. Փփուն Հայոց բաժանումն յլ. յի. յթ. յոմանս ՚ի ձեռագրաց, նաև ՚ի Դ. կը գտնենք միօրինակ՝ թէ ՚ի Պատմագրութեան և թէ յԱշխարհագրութեան։ Բ. Ի Պատմագրութեան<sup>2</sup> վաղարշակոյ համար կ'ըսուի « զալ իջանել մերձ՝ ՚ի սահմանն Շարայի, զոր հինք վերին բասեան կոչէին. իսկ յետոյ վասն հատուածի վզրնդուր բուզկարաց՝ վընդայ բնակելց ՚ի տեղին՝ վանանդ անուանեցաւ ». արդ յաշխարհագրութեան<sup>3</sup> ևս երեք մաս բաժնուած են բուզկարք, յորոց մին Շրդիսոնեղոր կամ վզրնդուր կ'անուանի. Գ. Պատմագրութեան մէջ Արտաշիսի արշաւանկը կը

<sup>1</sup> Ա. Գիրք. գլ. Լ. էջ 58. ասելով. « Որը բազմաշըրքամբ հրամանաւ Պատումնայ գրեակութիւն մարդկան չափեցին »։

<sup>2</sup> Գիրք Բ. գլ. Զ. էջ 162.  
<sup>3</sup> Կի Շուահամար, էջ 616.

ձգի մինչև յԵլլադա. նոյն բանը կը հաստատուի վերսափին նաև յԱշխարհագրութեան<sup>4</sup>, Գ. Մանօթ է Աղեքսանդր մեծի պատմութիւնն՝ Ամազոնաց արարուածովք հանդերձ. որուն իրրեն թարդմանից կը համարուի Մ. Խորենացի, ըստ ընդհանուր կարծեաց հայ գրագիտաց. մի և նոյն իրաց յիշաակութիւնն կը գտնուի նոյնապէս և յԱշխարհագրութեան վերոյիշեալ օրինակին մէջ, էջ 26. Ե. Պատմագրութեան մէջ հեղինակն՝ ձենաց վրայ խօսած ժամանակ կը յիշէ ձեւմբակուր զոմն (թագաւոր) և կը նկարագրէ այն ժողովուրդն իրբեն խաղաղասէր և ճարտար. մի և նոյն անունն ն նկարագրիրը կը գտնուի նաև Աշխարհագրութեան ամէն օրինակաց խզ և խի ժուահամարին մէջ, էջ 608, ասելով՝ թէ « ուր խաչն կայ »։

Այս երկու դրուածոց մէջ եղած համանմանութիւններէն զոմանս հետազոտեց նաև կուզզմիթ. բայց մեր եղրակացութիւնը արամագծապէս անոր դէմ կ'ելլէ, հանգոյն երկու ականս հատանոլաց, որոնք այլ և այլ տեղերէ կը մկանի իրենց գործոց բաժանման կէտը. Լաւ կը լինէր եթէ գերմանացի քննազամն կամ ակամոյ փոխէր իւր ընթացքը, Յիրտի, մենք չունիմք և շնչնք ունենալ ցեւտոնի որդուցն կտրող աւրը. բայց ունինք մեր Հայկ դիւցազն և հայկական մատենագրութիւնն և մատենագրաց հզօր փաղանգը, զորս կուզցինք ցարդ՝ ՚ի վկայութիւն մեր գատին. ուրեմն անոնց դիմաց պարտի տեղի տալ եթէ ոչ. այս բանս կը յաճնենք մեր ուշիմ ընթեր-

<sup>4</sup> Նորագիւտ օրինակ. ապելաւ ՚ի Վենետիկ յամին 1881, ծանօթութեամբ Հ. Արսենի Սիւնեան:

5 Գիրք Բ. գլ. ԶԱ. էջ 162.  
6 Գիրք Բ. գլ. ԶԶ. էջ 169.

յողաց. իսկ մենք կը փութանք ցուցա-  
նել դերմանացւոյն խոտորմունքն՝ յո-  
րոց միեւալ հասաւ այդ կէտը և անոնց  
սկզբնապատճառներն, որք են, նախ՝  
թէ 'ի պատմագրութեան և թէ յաշ-  
խարհագրութեան եկտուտ անհա-  
րազատութիւնք (interpolations). եր-  
կրորդ, ժամանակագրական վրիպակի-  
ներ, որոնք յայտնապէս կը տեսնուին  
այն երկու գրուածոց մէջ, իթէ այն եր-  
կասիրութեան օրինակաց ներկայ վի-  
ճակին պարունակին մէջ փակուած՝ ը-  
նենք մեր քննադատութիւնը, ինչպէս  
ըրին Սէն Մարդէն, Պատկանեան և  
կուգչմիթ, շփոթելով զանո՞ք Մ. Խո-  
րենացւոյ բնագրին հետ, կամ վերա-  
գրելով Մ. Խորենացւոյ. մինչդեռ այն  
երկասիրութեանց հնագոյն օրինակ-  
ները ձեռքերնիս հասած չեն. ահաւա-  
սիկ բարելոնեան աշտարակին և անոր  
խառնակութեան հիմք: Բայց մեր  
քննադատն, որ է միանգամայն պատ-  
մագիր, պէտք է խոստովանի թէ պատ-  
մութեան երկու աչքերն են ժամանա-  
կագրութիւնն և աշխարհագրութիւնն,  
առանց որոց՝ պատմութիւնն կորուա-  
նելով իւր ուղղութիւնը՝ կը գահավի-  
ժի անդէն յանդունզո շփոթութեան<sup>1</sup>.  
և թէ աշխարհագրութիւնն քան զայլ  
ամենայն գիտութիւնս՝ ենթակայ է  
փոփոխութեան: Երկրորդ Հայաստա-  
նեայք (անշուշտ Խորենացւոյ ժամանա-  
կէն 'ի վեր ցցջ գար) 'ի գործ ածէին<sup>2</sup>  
անոր Աշխարհագրութիւնն իրենց ու-  
սումնարանաց մէջ յարմարցնելով ժա-  
մանակին հանգամանացն և պահանջ-  
ման: Ռւատի առանց տարակուսի պատ-  
մական, աշխարհագրական և տեղա-  
գրական անհարազատութիւնք որպես-

1 Օրինակ կեցեր է Ազեքսանդրից պատրիար-  
քին՝ Եւաբքեսի Եկեղեցական պատմութիւնն,  
յորում՝ ժամանակագրութեան հարգ չպա-  
հանելով, մէկ եպիսկոպոսի տարիներն եւ գոր-  
ծերն ընծայուած են միւսոյն:

2 Այս բանիս օրինակ կրնայ համարուիլ Շա-  
նապարհողութիւնն Տէր Եղիշէի Սարբանիացւոյ  
հայ հնախոսի յերկիրն հրոյ և 'ի հակոռնեացոյ.  
Բազմ. Հանդ. 1882. Պրակ Գ. էջ 212, որ Խո-  
րենացւոյ Աշխարհագրութեան 1 և 2 էլերու  
ներշնչութիւն է:

դաժ են յայնմ՝ Յիրաւի, աչքէ անցընե-  
լով Խորենացւոյ վեց ձեռազիր օրինակ-  
ներն, վերոյիշեալ տեսութեամբ իրար-  
մէ շատ կը տարբերին. անկարելի էր  
և դործս չէր ներեր անոնց տարբերու-  
թիւնքը մէջ բերել. այլ կը զրկենք  
զիմափառողոս՝ յամին 1865 'ի Վենետիկ  
տպուած Մ. Խորենացւոյ Մատենա-  
գրութեանց թ. տպագրութեան, ուր  
ամենայն ինչ ակն յանդիման երկի:  
Խոկ 1881 թուին 'ի Մ. Ղազար տպուած  
օրինակն և հոլանդեանը, Վիստոնի  
հրատարակութեամբ, որք վերջին գա-  
րուց բնօրինակութիւնք են, ինչպէս  
գրութեան ոճէն<sup>3</sup> և յայլ հանգամա-  
նաց երկի, ամենէն աւելի եկամուտ  
անհարազատութեանց ենթարկուած  
են, և ասոր վրայ ըրին իրենց քննու-  
թիւնքը՝ Սէն Մարդէն և կուգչմիթ:

Ուստի նկատելով այս հանգամանքս,  
մենք այս առաջարկութիւնս կ'լինենք  
գերմանացի քննադատին և անոր հա-  
մախոնից. կամ Մ. Խորենացւոյ Աշ-  
խարհագրութեանը մէջ կան պէտքն  
եկամուտ անհարազատորիշնը, յորս  
րուելի են նաև իրենց բերած վկայու-  
թիւններն, և կամ ոչ կան: Այդ երե  
ւուաշինն ընդունին, ուրեմն մեզի  
համակարհիք են, և իրենց ըրած եզ-  
րակացուրինը զիսովին անհիմն է,  
հիմնեալ յաշն: իսկ երեւ վերջինն  
այն ժամանակ բաելու է բէ այն եր-  
կասիրուրիշնն ոչ բէ ի դարու, այլ Ը,  
Թ, Ժ, ԺԱ, ԺԲ, ԺԳ, ԺԴ, ԺԵ, և ԺԶ  
դարուց արտադրուրինն պիտի հա-  
մարուի, ըստ հուրդմիքի դրած սկրզ-  
բանն. որովհետեւ այս դարերու գոր-  
ծանական բերոց, լափուց, կշոց,  
բանից, տեղեաց և պատմական ա-

3 Որոց հնագոյններց մին 'ի վանա մեր և երկու  
գաղափարեալ յշխամենին են անժուական: Եր-  
կրորդն է Ակն Շուականին: իսկ մացածներն  
համեմատաբար նոր են և մինչև ԺԶ դարը կը  
հասնի:

4 Տես յամին 1881 տպագրութիւնն 'ի Վենե-  
տիկ, ուր Խորենացւոյն ոճէն գուրս անսովոր  
բացարարութիւններն փակութիք մէջ առնուած  
են 'ի գաղցերէն թարգմանութեան:

5 Սցն այս օրինակին յէջ 17 կը յիշուի  
Ասպարհուու, որդի Խուրաաթայ, որ Ենթ (Շուա-

հուսակեց յիշատակուրիշնք կամ, և շատ տեղ հիները՝ նոր տնօւամբք բացարուած են այն օրինակաց մէջ։

Պասրա. վեց օրինակաց մէջ ևս կը դտնուի, ուստի ստուգիւ չէ մարթ եկամիւտ յաւելուած ինչ համարել, եթէ ձեռքբերնիս հասած օրինակներէն դատենք, որք ամէնքն այ ժի և գծ զարէն անդին չեն անցաներ. այլ թէ հնագոյններն ես ունէին. այս չէ մարթ հաստատել: Բայց որպէսէտ նախնարար յիշատակած երկը հնագոյն օրինակաց մէջ իրքև աշխարհ յիշուած է Պասրա կամ Պարսա և ոչ եթէ քաղաք, այս պատճառու շատ հաւանական է թէ Խորենացւոյ ժամանակի իսկ այնպէս կը կաշուէր յԱրաբացւոց՝ Եփրատայ և Տիգրիսի մէջտեղի սպիտակահաղ կամ քարուտ (Bās'rah) երկիրն, յորմէ տպա այն քաղաքը Պասրա կոչուեցաւ, ըստ Վիկիէն առ Սէն Մարզէնի<sup>1</sup>. ինչպէս վենետիկի ածանցի ՚ի վենետաց, որք գարերավ յառաջ էին քան զայն. ասոր զեռ ուրիշ օրինակներ ես Կ'ընծայէ մեզ պատմութիւնն: Արդ քանի որ մեր քննադատն պատմաբանօրէն ուրիշ պատճառաւ մի չէ կարող ցուցանել մեզ՝ այն քաղաքին անուանակոչութեանն, միշտ բանաւոր է այն անուան գոյութիւնն առ Արաբացին՝ անդրադոյն ձգել քան զշինութիւն քաղաքին. վասն զի շատ անդամ կը հանդիպինք յախարհազրութեանն, ուր քաղաքը՝ աշխարհայ կամ գաւարաց անուամբ կը յորջորջին, ինչպէս նաև կղզեաց.

ուստի Մ. Խորենացի՝ քաջ ուսեալ ՚ի Հերոդուսեայ՝ Ցիդրիսի և Եփրատայ այն Հովտին վաճառսաշհութեան համբաւեն, և մի այլ համագիր քաղաք, կարող էր զայն երկրին անուամբ յորջորջել, և կամ երկիրն իրքև քաղաք յիշել:

Ըստ իմ կարծեացս՝ Մ. Խորենացւոյ յիշած այդ վաճառսաշհ քաղաքն, մարթի լինել քարուտն Արաբիոյ Բոսրիա, կամ ըստ յոյն և հոռվմայեցի պատմշաց՝ Պատրու քաղաքն, զորբաց յեսայեայ և յԵրեմիայ՝ յիշէ նոյն պէս Ամմիանոս, (14, 8, 13). և Կրտուերն Պինխոս<sup>2</sup> (Descrip. Orb. 22) յասելն «Arabie est maxima civitas, quæ maxima negotia habere dicitur, propinqua Persis et Saracenis, in qua publicum opus tetropoli mirabile nominatur s. բայց յետոյ Խորենացւոյ գաղափարողն, շփոթած է զայն ընդ նորանկառոյց քաղաքին Պատրուցւոց Այս ենթադրութեանն իրք ապացոյց կարէ ինել, զի Պտղոմէոս (5, 17) ևս նախայիշատակեալ քաղաքը կը յիշէ, ուրեմն ՚ի հարկէ և Մ. Խորենացի, որ անոր աշխարհազրութիւնն համառօտեց։

Սասանեան տէրութեան Սպահանքետութեանց բաժանելու մասին՝ չարաչար կը գատէ նա զլի՝ Խորենացի. բայց ինքն աւելի զատուելու և գատափետուելու արժանի իրողութիւնն մը կ'արտաբերէ. յննագամն կը շփոթէ Պահլաւէ ցեղերու բաժանումն՝ որ 'ի Պատ-

կամ քիշ յառաջ. Ինչպէս նաև յէրն 16 Արա, յէրն 14 Գայիոս (Գաղղիա) և Փանիկ անունն, որ Բ. Մակաբրայեւոց մէջ պայն գործածուած է, բայց Փափէ կամ Փափէացւոց նշանակութեանը Յէլ 22 Հյորոպին (վաճառապուն), որ Լեւոնի Թագաւորութեան ժամանակ և Այսակ մէջ գործածուեցաւ: իսկ յէլ 41 կը դանուին անուամբ չափուց և արժէգրամնց, աղար, աղմա, մէջիա, անքա, պարևոչա, պարմաշիս, հաւուադրամ, շաշուադրամ, նոյնադրամ, դասդրամն աշար կամ ամիթ: Տես 'ի Սիստան Սիշանի. Այսաւ:

1 Տես 'ի բանական աշխարհագրական, էջ 364, ապեալ ՚ի Բարիզ, յամին 1879:

2 Զօրս երեքի կը բաժնէ և ոչ թէ զորս, ոյս-

կամին անկանէ, մինչեւ Կուրդիթ զլլյամանագրին այն Ենթին գրուտ լինել կը հաստատէ: Աը պատմուի անդ Արաբէպիերու գործըն ՚ի քրիստոնէութիւն Զասիմու միայնակեցի մը ձեռքսպա, կը յիշուի Ներսէս Կատարար. կան Տէր Եփրատոյ և Արշամունեաց, միջցեռ ևս 690 Շուականին գուցէ քիշ յառաջ, առաջ սիզոպանէրը, ուստի այն թուականին կամ Ը. գարուն մէկը կիմար զայն յԵրև. Յէլ 25 յէր Խուզդրադրա (Խուստապատ), որ էր 1876 թռականին. (Պատէ. Պատմ. Հայոց Գ. Հա. էջ 529): նշյան իշում կը յիշուին թուրքը, որ ժէ ժմանական հազար գործածուած կը դանուին: Յէլ 25 կը յիշուի վինենոյին, որ Վենետիկուցւոց Քրաքերութեամբ մաս ՚ի Հայս յԺԲ գարու-

մադրութեան, ընդ բաժանման կամ լու և ընդ յիշատակութեան 20իւ չափ գաւառաց կամ աշխարհաց Սասանեանց տէրութեան, զոր առնէ յԱշխարհագրութեան<sup>1</sup>: Երկրորդ, հայ Հերովոտոսին հետ դատաւոր կը կանգնին նաև յօտարաց Միհրխոնդ<sup>2</sup> և Շառուխնարն<sup>3</sup>: Վերջինս կը ցուցնէ թէ մինչեցնուշիրուան (Խոսրով Ա) արդէն իսկ Սասանեանց կամ պարսկական տէրութիւնն բազմաթիւ կուսակալութեանց և սատրապութեանց բաժնուած էր, յորոց շրեքտասանիւ չափ յանուանէ իսկ կը կոչէ: Բայց կը յաւելու՝ թէ խոսրով դիւրաւ կառավարել կարենալու համար՝ չորս մեծագոյն կառավարութեանց վերածեց, այսինքն է՝ արևելեան, արեմուեան, հիւսիսային և հարաւային: Աստի ևս մարթ է իմանալ՝ թէ խորենացոյ զանոնք զուտ հին պարսկային կամ պահաւիկ անուանակոյութեամբք յիշատակելին որբան հմտական է և բանաւոր: Յիրաւի, կը նախանձիմ քու և կարծեցեալ վրիպակացդ վերայ, ով մատենագարանակիրդ մոտենագիր և համայնագէտդ Մովսէս: Բայց ոչ նոյնապէս քու դատաւորիդ և իւր քննագատութեան վերայ, թէպէտ և յարևելուածը կցած՝ նա արևելեայց վերայ այսպիսի պատղամներ կ'որոտայ:

Գանձ այսուհետև Պատմագրութեան մէջ երեսած ժամանակագրական վրիպակաց վերաբնութեանը, զորս կուռզմիմեամբք կը շարէ կուդմիթէ, իրրկնապատակի իրեն նետաձգութեանց: Եօթնէն ձեռագիր օրինակը անթերիք, աշքէ անցուցինք Ս: Միհրովբայ մահուան տարբթուոյ մասին: Ռձթ և Ռձթ օրինակները չեն զբեր հանդոյն

Իւրին կարենի Պահաւաց, Մուրենի Պահաւաց և Սպահաւանի Պահաւաց: (Պատմ: Հայ. Բ. ՀԱԱ):

<sup>1</sup> Ա. Թռաւահամբ:

<sup>2</sup> Էջ 364:

<sup>3</sup> Պատմ: Սասանեանց: Էջ 438, ապեալ Պահաւան:

<sup>4</sup> Նախ. ՌՃԹ, ՌՃԱ, ՌՃԱԲ, ՌՃԴԳ թռուական ներառն մէջ դրաւած օրինակներն, ԶՄԻ թռուած օրինակի բազգաւակեալ ապագիր օրինակն: բաց 1868 թարբականէ Յակով կարինեանի յամին 1868 թ:

այլոց՝ և ցոկիզբն ամին երկրորդի », այլ և ցոկիզբն երկրորդ թազկերտի Պարսից եղեց թագաւորի »: մանաւանդթէ երկրորդ բառը գիւստառիւ ևս կը գրեն, որ աւելի թազկերտին կը վերաբերի քան թէ տարւոյն, Ուրեմն կուդշմիթ ինչպէս կը հաշուէ այն 'ի 17 փետրուար, 440 թուականին: Հեղինակը կը լի: Խորենացոյ այդ թուականն իբրև սիսալ ուղղել ուղած ժամանակ՝ ինքը թուի սիսալել. բայց իրեն ներելի է: Ցեննենք թէ ինչ պիտի հետեցնէ: և իսկ Յազկերտ երկրորդի թագաւորութեան սկիզբն եղաւ 438, օգոստոս 4 թուականին »: Քննադատն՝ Պատկանեանին<sup>5</sup> և նեղուցէ կարծեաց արձագանքը կը հնչեցընէ, վերոյիշեալ ասորապարսկային վկայաբանութեան վրայ մրայն հաստատուած, որոյ հարազատութիւնն գեռ քննութեան կարօտ է, և զոր ինքն այլուր շինծու պատմութիւններ կ'անուանէ, աստ կը համարձակի խորենացոյ պէս բանիրուն և ժամանակիցից պատմագրի մը վկայութիւնը այնու ոչնչացընել: Սակայն Ռառվինուն՝ ժամանակիս պատմագրաց հայրը և Սասանեանց յիշատակին մեծագոյն գործով անմահացընողը՝ 440 թուականին կը գնէ ճիշդ այն թագաւորին թագաւորութեան սկիզբը: Մօրգման<sup>6</sup> 444ին կը համարի: իսկ Քիինգըն բաղդատելով զիմիթիանոս Մարկեղինոս (Էջ 25), ընդ խորենացոյ (Գ. Պ. Կ.): Համաձայն կը գտնէ, և նախազա կը համարի 440 թուականը:

Վուամ թէ թագաւորութեան 44 տարիներն ընծայելն անոր յաջորդ Յազկեղինոս (Էջ 25), ընդ խորենացոյ (Գ. Պ. Կ.): Համաձայն կը գտնէ, և նախազա կը համարի 440 թուականը:

Տգիս ապօսած ՌՃԳ և ՌՃԾ Շռաւականներուն գրուած՝ օրինակներուն բազգատութիւնը:

Տ Վասն զի ըստ այսոց՝ մէնէկէ Հայոց եղթներորդ տափան ըլլալով, կը համազատասահներ մերժին եւսին յունեւարի և առաջին կիսոյն վերաբարի: որով պրոյն մահը անկանէր 441 թռականին:

<sup>5</sup> Journal Asiatique, 1866, p. 167.

<sup>6</sup> Պատմ: Սասան. 301:

<sup>7</sup> Zeitschrift, vol. VIII. p. 70.

Նի սխալ է . բայց այս սխալը՝ է փոխադարձ ընծայութեան տամաց , որ յաջորդութեան կարգն ամեննեին չի խանգարեր . որովհետև խորենացի ևս համաձայն Ռատուլինսին և Քլինդընի , Յազկերա Ալի թագաւորութեան տարին՝ 399ին , և Յազկերա ԲԽ 440 թուականին կը հաստատէ . ուստի այս երկու թագաւորաց մէջտեղ եղած ժամանակամիջոցն ինչպէս ալ բաշխելու ըլլանք դարձեալ այն երկու կէտերը միշտ հաստատուն կը մնան : Այսպիսի սխալ մը եթէ հեղինակութիւն մի ջնջելու զօրութիւն ունենայ , ոչ միայն Ե . դարու Մովսիսին , այլ և ին համար ևս պարտ էր լինել , որուն կ'ուզէ ընծայել զայն կուղչմիթ : Սակայն ես տեսնելով Սասանեան թագաւորաց յաջորդութեան և ամաց մասին անորոշութիւնն աստի՛ և անափ բիւզանդական , պարսիկ և ներկայ ժամանակիս պատմագրաց մէջ գտնուած տարածայնութիւնը , չեմ կրնար այս բանու բացարձակապէս սխալ համարել խորենացւոյն . այլ կ'ախորժիմ ըսել թէ դադտնիք մի է , և թէ այս գժուարալցծ զաղոնեացու

1 Թովմաս Արծրունի Կ'ըսէ իւր Պատմութեան Ա . Գրոց Ա . ԺԴ և իւր Քլոնց մէկ , թէ Ոլրպէս աւանդեցաւ այս 'ի Դ . Դարութեան Մ . Խորենացւոյ Վերաբարձութիւն 'ի վերայ երեցունց գրուածէաւ հաստածոցն , որպէս և ընթեռնուամբ 'ի բանիքուն գրակարգութեան Մովսիսի տեղեզրահաշակ մարդապետ է : « Ասմուկէլ Վերաբարձութիւն իւր սան Քրոնիկունի , իւր պատմութեան թէ ել ճեկով մինչև ցամ 465 , իւր յորէ . « Աստանը աւանդումն կատուրքան Հայոց , գրեղոց 'ի Մավսիսէ » : — Կիրակու , յետ նահանգութեան Աստրաման , յասէնք 'թէ Պերոզ ' մարզպան կարգեց զՄանուսն , կը յարէ և Յայուսիկ Մըլսէս քերորդանայրեն . ցուցընել լով 'թէ այն կըտաշարքար և Կայրենասէր եկրունին Վարդանանց պատերազմն և Հայաստանեաց այն ազետից ևս ականատես եղած էր և ողբացած : Ասոր յայտնի ասացցոյց և Ա . գրոց ի՞ն գլխոցն մէջ Պարցյիք և անոր յալորդաց վրայ խօսելով սասելն Սիրելէ էր ինձ առ նոքքը յաշխարհ զմոււտն իմ լինել և նոցա տեսութեամբ զուարձանալ և յարդեաց վասնից ապրէն : — Նախայիշեալ Յանձնանի կառած երկորութ օրինակն , ըստ վկայութեան հեղինակին , ամէն երեսի վերին լուսանցի մէջ դրածէն մասնաչափ հեռաւորութեամբ մի մի գիծքալուած կայ , բայց մէջը բան մի գրուած չէ .

լուծումը Մ . Խորենացւոյ Դ դրոց վերադարձութիւնն և ժամանակագրութիւնը միացն կարէր լուծել , ամենէն հնագոյն և մերձաւորն ըլլալով ժամանակաւու , և կը հասնէր ցջենոն կայսր (490) . Ասոր գոյութիւնը կը հաստատեն ներքին և արտօքին և անժմտելի փաստեր : Երեք մասերէ կը բաղկանար այդ Դ . գլուխութիւնն , ըստ իս , Ա . Բաղդատաւրիւն այլինայլ ազբերաց զորս նա քննեց . Բ . ժամանակագրութիւն գլխաւոր գիպաց և անձանց , ըստ գործածութեան այլ և այլ ազգաց . Գ . Եարունակութիւն ժամանակակից պատմութեան :

Արդ Անանիա Եիրակացի <sup>2</sup> , Սերէոս <sup>3</sup> և Ս . Ասողիկ <sup>4</sup> , որոնք զՄ . Խորենացի իրեր ժամանակագիր ' Եւսեբեայ կը նըմանցընեն , և հայ Եւսեբիոսի ժամանակագրութեանէն , ինչպէս տեսանք 'ի վեր անդր՝ օգտուեցան , հետաքրքրական ցուցակներ կը ներկայացընեն Սասանեան , թագաւորաց յԱլբաշշէ Աէց Ալբակով վերջին , տարրեր ըստ կարգի յաջորդութեան , ևս և ամաց , քան զոր ներկայացընէ Ռատուլինսըն ըստ թապա-

այս բանս հաւանօրէն կը ցուցանէ՛ թէ Լամբրոնցուցն ձեռքբերն որուն գաղափարն էր այդ 'ունէր և զգամանակագրութիւն Մ . Խորենացւոյ , և թէ անոր գաղափարողը միար ունէր յետոյ այն մասն ևս գաղափարել : — Անանիա Եիրակացի (չ գարուն) որ կը կարծուի լինել հեղինակ ժամանակագրական պատմութեան միջ , կը վկայ թէ ի ' Մ . Խորենացւոյ և Անդրէասոյ օժանդակեալ է : — Խնկ ներքին պատցուք են նախ Մ . Խորենացւոյ (Պատմ . Հայոց գիրք Բ . Գլ . ԶԲ) Խոռուերը , թէ Ոչ է պատմութիւն ուսույթ առանց ժամանակագրութեան : Բ . իւր Ա . գրոց թի գլխուն մէջ Հայկանունի նահապետական գիտութեան ձեռքուն մէջ Անդրէասոյ գիտութեան ընկերով այսպէս կ'ըսէ . և կեցեալ ... ամն՝ ծնաւ . յետ ամաց ... ծնաւու և այն , յորմէ յայտնապէս կը տեսնուի թէ թիւք ամաց պահան են , ուր ամք յիշին : Այս բանիս ցանկացողաց կը ցուցանէր մեծանուն Անդրէասի հմտական յօդուածը 'ի Բազմ . 1851 , մարտ 4 :

2 Ժամանակագր . տես 'ի Ճառընակիր ՃԹ , էջ 384 :

3 Պատմ . ապեալ 'ի Ա . Գետրսբուրգ . 1879 . Բ . Կարութիւն , էջ 11-21 :

4 Զեռագիր օրինակ գրեալ ՈՃԱԲ Շուականին , էջ 370 , 'ի Ա . Պաղար :

բեայ, Միրիսնդի և այլոց միջնադարեան պատմագրաց: Յօդուածս չի ներեր զանոնք ղիմացէ ղիմաց կարգել աստ, բայց հարկ կը համարիմ լսել թէ արժանի են աշալըրջ քննութեան, Անդղիացի պատմագիրն ուրեք ուրեք՝ ի վերջ պատմութեան անստոյդ հարցականներով կը կարգէ անոնց ճիւղագրութեան անուանքը: Մօրդման՝ վերոյիշեալ երկասիրութեան մէջ վլամ Դէ և Յազկերտ Աէ մէջտեղ ուրիշ թագաւոր մը կը դնէ, որ թագաւորէր ՚ի Սէիստան. Նոյնը կը հաստատեն Յերէսոս (Էջ 20): Եւդիքիոս<sup>1</sup>, Թագարի<sup>2</sup>, և Ապու Օպէիստահ առ Մասուտի՛ զիազկերտ Ա՛ որդի կը համարին վլամայ Դէ: Ղազար Փարապեցի՝ եղբայրն էր, Կ'ըսէ (Էջ 33). Աղջմիաս՝ տարակուսանաց մէջ կը թողու. Միրիսնդ (Էջ 321) երկու կիրապով ևս կը յիշէ: Սոյն այս տարածայնութիւնն էր տիրէ նաև միւս թագաւորաց մասին: Ուրեմն ՚ի միջի այսչափ տարակուսանաց և անստուգութեանց ի՞նչ իրաւամբ կը մեղադրուի Մովսէս, քանի որ անոր ամբողջ գործն՝ այսինքն է ժամանակագրութիւնը ձեռքբերնիւ չունինք:

Որ և իցէ բան մը ուղիղ դատելու համար, պէտք է նախ ճանչնալ. սակայն մենք, քննադատն իսկ կը խոստովանի իւր նախընթաց գրուածոյն մէջ, չենք ճանչցած ցարդ, (անոր մի մասին անյայտանալու պատճառաւ), թէ Մ. Խորենացի ինչ ժամանակագրութեամբ վարուած է. ուրեմն չենք կարող ուղիղ դատել զնա: Արդ մինչեց ցԶ դար, և Մովսէս կաթողիկոսի ձեռքով՝ Հայկեան բուշական հաստիկութեան հաստա:

<sup>1</sup> Հո. Ա. Էջ 548.  
<sup>2</sup> Բ. Էջ 103.

<sup>3</sup> Նարմանարաց Թուրականը, որուն հետ ՚ի միասին հաստատուեցաւ Պարոյրի ձեռքով Հայ կազունաց Բ Հարստութիւնն, ըստ իս: Այս թուրականը գործածութեան իրեւ պապոցը կարեն լնել Ա. Խորենացոյ Պատմութեան Ա. դրոց ԽԱ. և ԽԲ դուքիներն, յասեն. Եւ այս հաւասարի դոլց մերոյ թագաւորութեանն առայնու ժամանակաւ, այլ մեք չկարդն կանո-

կաններ կը դործածէին. բաց ասոմի՛ կարելի է թէ Խորենացին Արարէորեան աշխարհնի բուշականն և թէ գործածած ըլլայ: Ուստի Գերմանացի քննադատոն կարենոր ծառայութիւն մի մատուցած կը լինէր թէ տոհմային և թէ արտաքին պատմագրութեան եթէ փոխանակ խաւարի մէջ զլովսէ վիրաւորելու՝ ժամանակագրական լցոն մը գտնէր զայն ճանչնալու համար, իսկ ես այս պարագայքս ՚ի նկատի ուներլվ, կը սեմ՝ թէ աւելի հաւատք ընծայելու է Մովսիսի և անոր հետեղ հայազգի այն պատմագրաց, որը Սասանեանց ժամանակակից ըլլալով՝ անոնց արարուածոց ևս ականատես և ականչալութեղոն և զրեցին, քան թէ վերջնոց՝ որը միջնադարեան միժութեան մէջ կամ դոյզն ինչ պատմական կայծերով դրեցին իրենց պատմութիւնն, մերթ ևս աղջասիրական մոլութեամբ շլոցեալ, մանաւանդ ուր յիշատակտրանք իսկ կը պակասին և կամ անոնց ըօաձը չեն հաստատիւ:

Փոքրուն Հայոց յԱ. յԲ. և այլն, բաժնուիլն առաջին անդամ Յուստինիանոսի ընծայելով՝ քննադատան ուղղակի պատմական և անժխտելի յիշատակարանաց դէմ կը մեղանչէ: Արդ, Փոքր Հայք Տրայիանոսէն ՚ի վեր հովովմէական իշխանութեան ներքի անկաւ, և անտի կամ անոր յաջորդներէն՝ արդէն իսկ յԱ. և յԲ. բաժնուած էր, որը Պոնտական առաջին և ոթերորդ թեմերուն կը վերաբերէն ընդ վարչութեամբ արեւելան քաղաքապետութեան: Այս բանս խիստ յայտնի է ՚ի հովովմէական յիշատակարանաց<sup>4</sup>. և անոնց առանձին Պրետորութիւնք ևս կարգեալ էին,

<sup>4</sup> Աեւ գուշնթեր և զՄարաց թագաւորան ո: Բ. Հայոց Լուսաւորութեան բռականք, որ ուրեք ուրեք գրչագրաց մէջ ևս կը դործածուի նովին անուանակոչութեամբ: Գ. Անդրէան բիւզանդացւոց թուրականը կամ հինգարդիրէիլ շրջանը, որ ԵՅՅ տարուան ժամանակամիջնոցն կը լրանար, և այս Լուսաւորէն քիչ եռքը, որով վարուին պատմիք և եկեղեցականը Վրաց:

4 Notitia Dignitatum Orient. C, 1, 2, 5, 25, 35: Եշնը Boecking 3, 4:

և. անոնց յատուկ պաշտօններն իսկ կը նկարագրուին <sup>1</sup>: Այս բանն կը հաստատեն նաև Դատատանեազիլք <sup>2</sup> թէով գոսի լըեծի և նորալրամանք <sup>3</sup> Սահմանադրութեանց կայսերացն փրուն թէողոսի և վաղենտինիանոսի: իսկ տահմային պատմազիլք, համաձայն խորենացոյ և ազգային աւանդութեան, այն բաժանումը կը հանեն 'ի վեր ցԱրամ, և այս ոչ առանց հիմնան. որովհետեւ Յուստինիանոսին շատ յառաջ փրուն Ասիոյ այն գաւառները լի էին հայազդի ժողովրդք, զորս այլընդայլց բանիւ պատմազիլք Յունաց՝ 'ի Քրոփից զաղթած կը կարծեն, և որը բիւզանդական պատմութեան և արքայական գահոցից վերայ մեծ և աշխարհածանօթ զեր իսազացին: Բատ Սամուելի <sup>4</sup> Անեցոյ կամ անոր շարունակողին և ըստ Յովհ. կաթողիկոսի Մօրիկ կայսրն եղաւ՝ որ յԵլբամէն հաստատուած Ա. Բ և Գ Հայոց բաժանումը փոխեց, Բայց այս ըստ իմ կարծեաց, երբորդ կամ չըրորդ անգամ վիճակափոխութիւնն եղաւ փրուն Հայոց: իսկ առաջինն և երկրորդն թէ ստուգիւ Խորենացիէն շատ յառաջ էին, անոր խօսքերէն <sup>5</sup> իսկ յայտնի է: իսկ

1 Բայց 'ի վերայեւեալ աեղերէն՝ նաև 'ի Աենեարէ, յամին 1635, տպեալ Հայութեական հնութեաց Գամձարամին մէջ. հաւ. Է. ուս յառաջը զարդարութենէ 'ի Տիգրանի Յուլիանոսը, Կըսուի «Hic postea successerunt 3500 praestansitatem Armenium, qui in scholas IX sunt divisi, de quibus in magistro officiorum dicitur. In hos Praetorianos Praetorio Summum habeat imperium», և Խ. Քըսուի մէջ Կըսուի «Comites Sagittarii Armeni ex Armeniis lecti, quorum magnus erat numerus. Scribit Vopiscus in Aureliano ei DC. Armenos assignatus fuisse. M. vero Antoninus CCC. Pescennio commisit. Sparlian. in Peccennio».

2 Cod. Theod. 7, 1, 15, 8, 5, 57, 12, 6, 21.  
3 Novelle cost. a. 441. tit. 5, 3.

4 Առաջին Խորենացոյ կարծիքն աւանդեւէլք մըլք: Եթէ յարք կը այս պատմազիլքը (Յունաց) այսպէս ասեն: 'ի Կապագովովիայ կեսարայն մինչև ցՊնտոսի կողմէ՝ ասեն Ա. Հայք. 'ի Պնտոսի ցՄելիքինէ Բ. Հայք, և ասաի ցանձնան Մագաց. Գ. Հայք. զայսոսիք փոխեալ Մօրիկ: զոր յիւրում աեղեալ ասոցիքը ու յիշատակարանքը, զորս եթէ ստուգիւ Մուսէսինէ՝ որ ունի... և և Գ Հայք. կոչէ դա Ա. Հայք»:

5 Գիրք Ա. գլ. Ժ. ուր ասէ. «Իսկ որ այլք 'ի յոմանց ասի 'ի յոնական կողմանն, մազ ոչ է հաճոյ»:

6 Հաւ. Է. Notitia Dignitatum. գլ. Ճ.Բ. էլ. 1664-5. Տես Եղանակէն նիկեփոր, գլուք Ժ.Ի. ու Ա. Մովսէս տեսած կամ

Յովհան կաթողիկոս պակասը կը լէցընէ յասելն. «Նախ զԱրմանին զոյն՝ որ Ա. Հայք անուանիւր՝ Բ Հայք զնա Մօրիկ կոչեաց. յարում մայրաքարտք և Աւետոսից, իսկ շնապարութիւնից, յարում մայրաքարտք է Կեսարիս և Բ Հայք անուանիւր՝ կոչէ զոյն Գ. Հայք, և առնէ զնա Եպարքի: իսկ Մելիքինէ՝ որ ունի... և և Գ Հայք. կոչէ դա Ա. Հայք»:

6 Գիրք Ա. գլ. Ժ. ուր ասէ. «Իսկ որ այլք 'ի յոմանց ասի 'ի յոնական կողմանն, մազ ոչ է հաճոյ»:

7 Ամենան Մարկ. և յիշատակէ կիւնարիա Մահարա XX, 9, 11. իսկ Սէքսոս Ռուֆոս Ք. Ա. որշակի կըսէ «Ita majestatem Romanam coluisse Capadoces, ut in honorem Augusti Cæsaris Masaca, civitas Capadocia maxima, Cæsarea nuncuparetur»: Այս վեցութիւնս բոլորովին համացայն է Մ. Խորենացոյ:

8 «Աին առ ծովուն հանգնէ, և առիւծ 'ի վերայ' մատեան ընդ ոտիւք ունելով, որ նշա-

կարդացեր էր ուրեք, չէ կարելի մեր-  
ժել թէպէտ և միւս մեղի ծանօթ պատ-  
մագիրը լուած ևս լինին. որովհետեւ յոյն  
պատմագրաց այդ լուութիւնը կարելի  
է թէ հայրենամիրտկան և անձնասի-  
րութեան զգացմանց հետևանքը ըլլայ.  
ուստի անտի բացառական փաստ մի  
յառաջ բերելն տրամարանական չէ.  
ինչպէս նաև զլլովիսէս անօխալ համա-  
րելն : Սակայն անուղղակի Ամիրանոս  
իսկ և Ռատովնաըն կը թուին հաստա-  
տել, բայց ամենէն աւելի այն ժամա-  
նակի հանգամանքներն : Արդ, իիւթա-  
նիոյ մասին թէպէտն պատմիք լուու-  
թիւն կը պահեն, բայց ամէնքն իսկ կը  
պատմեն Գթաց, Սարմատացոց և Աս-  
րակինոսաց աշխաւանքներն, որոց մի  
մասն Շապէւոյ կողմը բռնելով, արշաւե-  
ցին արեելեան կայսրութեան խորերը :

Երկրորդ կոստանդիսսի և Յուլիանոսի  
շարաշար պարտութեամբը՝ Պարսիկը  
կարող էին արշաւել մինչև 'ի Բիւթա-  
նիա . գուցէ այս իրողութեանս իրեւ ա-  
պացոյց ըլլայ Յովիանոսի լեզապատառ  
փութալն 'ի գային, հնդամիւ գա-  
ւառաց կրտսեամբ : Սակայն ենթա-  
գրելով թէ այս դէպէն իսկ իրօք պա-  
տահած շինէր, անոի այս հետևու-  
թիւնս միայն յառաջ կու գար, այս ինքն  
է, Մ. Խորենացի կարէ սխալած ըլլալ,  
բայց ոչ երբեք դադարել 'ի լինելց հեղի-  
նակ Հայոց պատմութեան, Ուստի այս  
իրողութեանս մանր քննութեանն հետ  
նաև մեր գատն յանձնելով ուսումնա-  
մէր ընթերցողաց, կը կնքենք մեր յօ-  
դուածն 'ի ծառայութիւն Հայոց պատ-  
մագրաւթեան :

Հ. Բարսեղ Սարգսոս

## ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

### ԱՐՏԻՐԱԾԱՑՐՆ ՀԱՅՈՑ Ի ԿԱՄԵՆԻՑ ՓՈՏՈԼԵԱՆ

(ՏԵ՛՛ Համուր ԽԴ, էջ 21, 97, 193)

## Ը

### ԱՐԿԱՆՔ ԱԿՈԲՍՈՑ ԿԱՄԵՆԻՑ ՀԱՅԱՋԳԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԻՆ

1672ին Մէհմէտ դ. կամենիցի ափ-  
բելով, երբ քրիստոնեայ բնակիչք կը  
թողուն, կը հեռանան քաղաքէն, այլ-  
ազգիք մեծամեծ խոստմնէնքներ անե-  
լով կ'առնուն կը մնան զչայս . սակայն  
600 հոգի, 'ի թիւս որոց և 14 կուսանք,   
կը հեռանան 'ի կամենիցէ . Սոց հետ  
կար տասուերկու տարեկան մանսուկ  
մի, որդի կամենիցցի Հայու, որ քիչ  
ժամանակէ 'ի վեր որբ և անտէր մնա-

ել էր . Մայրը վազուց մեռած էր,  
իսկ հայրը դեռ նոր՝ կամենիցի առման  
միջոց՝ իւր տունը հրդեհէն աղատելու  
աշխատելով բոցոյն ճարակ եղել էր :  
Այս փոքր երախայն (որովհետև հայ-  
ը միշտ յարաբերութիւններ ունեցել  
էր թաթարաց հետ), համարձակ կը  
խօսէր թաթարաց, նոյն և թրքաց լե-  
զուով. այդ լեզուաց գիտութիւնը՝ վեր-  
ջերը՝ մանկան մեծ թարգմանի պաշ-

նակէ պյսպիսի ինչ. քանզի առիւն հզօր է 'ի  
գաղանս, այնպէս և պարսկականն 'ի (Թագա-

ւորս . և մատեան ժողովիլ և իմաստութեան,  
որպէս հռովմայեցոց աէրութիւնն »: